7. ՋՈՒԱՆՇԱՀ

Կէղի, չէղի մե թագավորմ կէղի։ Էդ թագավորի յաշ կրնցնի սաքսան, տոխսան (յոթանասուն, ութսուն) իրան մի ավլադ թավլադ չէղի։ Օրերուց օր մի կշիվարի ու կէրթա ուր բաղի մեջ ման գիգա։ Մեկ դավրեշ էնդեխից գիգա, կասա.

— Բարի լուս քի, թագավոր ապրած։

Կասա.— Ասսու բարին, խաղար բարի, դավրեշ բաբա։

— Ի՞նչ կմտածես, թագավոր ապրած։

Կասա.— Ես չմտածեմ, ո՞ր մտածե, իմ սաքսան, տոխսան յաշ թըմըմավ, ոնչ ավլադ ունիմ, ոնչ թավլադ, իմ հարստութին ու իմ թագավորութին բոշ բառադի պտի էրթա կորի։

Կասա.— Թագավոր ապրած, դու կէրթաս քու խաս բախչի մեջ մե ախպուր մի կա, էնդրա միշեն մե խնձոր մի դուրս կիգա, էն խնձոր կբերես, կես դու կուտես, կես կիտաս քու կնկանը, ու քառսուն խատ անծին էրինշ մատաղ կէնես, կցրվես։ Ասսու խրամանքով ինն ամիս, ինն օր, ինն սահաթ օր թըմըմավ՝ քեղի մե տղա կէղի, բաց տղին անուն չդնես չուր ես գամ։

Ասսու խրամանքով օր տղեն կէղի, տանի մի շուշաբանդ հ՚օդի մեջ կդնա։ Չուր տասնրխինգ տարին՝ կթրմի, էդ տղեն դուս չխանե, ոնչ օր կտեսի, ոնչ արև, բաց ընդրա աշչուն թամբեխ կէնա. «Ընդրա կերակուրի մեջ ոնչ կուտ մնա, ոնչ օսկոռ»։

Տասնրխինգ տարին օր կթմրմի, օրերուց օր մի էդրա եմակի

մեջ մե կտոր օսկոռ կէղի։ Կուտա, օսկոռ կթալա, քիսի (կդիպչի) ակոշկեն կկոտրի։ Էդդին արևու շող կղարկա մեշտեղ։

Էդ տղեն կիշկա օր բանմ (արևու շողը) մտավ հ'օդեն, կասա. «Ջանըմ, էդ ի՞նչ բան էր մտավ իմ հ'օդեն». ուր շորեր կխանա, կբաշլայի ըդրա խետ կռիվ։ Էնպես կէղի՞, քրտնքի մեջ կծավալվի էդ տղեն։ Տեսի էն կողմից հանկարծ մի մարթ մի դիդա, կասա.

— Ցա՜, թագավորի տղա, քու դլխուն, արևուն մեռնիմ, էդ ի՞նչ ա կէնես։

Կասա.— Ջանըմ, էսա մարթ մտե իմ հ'օդեն, իմ հ'օդից դուրս չի դա։

Կասա.— Քու դլխուն արևուն մեռնիմ, թագավորի տղա, էդի մարթ չէ, էդի ասսու արևն ա, էլի դուրս, տե՛ս, օր կա, արև կա, աշխարք կա, մարթիկ կան։

Այն օր լէ ասսու դասու դթրաթով (աստծու հրամանով) էդ թագավորի բոդար քըպարներ (խորհրդականներ) ժողով էրած ան, օր էդ թագավորի տղին անուն դնեն։ Մեկ կասա անուն էղի Ասլան, մեկ կասա Կիրակոս, Մարկոս, հանկարծ դավրեշ գիգա, կասա.

— Ցա՜, թագավոր, տղին անուն կգնա՞ս։

Կասա.— Չէ՜, դավրիշ բաբա, ես չեմ լէ, բաց իմ բոդար քըպարներ գուլին անուն դնան, ես չեմ ընթունե։ Ինչ օր քու կամքդ կսիրա, էնի դիր, գնա։

Կասա.— Անուն Ջուանշահ ա։ — Ու հանկարծ կհամբարձի դավրեշ։

Ժամանակ մի մեջ տեխ կընցնի։ Տղեն գելի կառի ուր վեց ընկերներ ու կէրթան նեճիրի։ Հանկարծ խազալ (եղջերու) մի կփախչի այդոնց առջևեն. Ջուանշահ ուր վեց ընկեր կիտան խազալի ետև, կլարին, խազալ ուրան կթալա ծովու մեջ ու կկորի։

Էդ մարթիկն ա, խազալ օր կկորցուն, գընկնին չոլ ու չոլըստան, կզվռնին. շատ ու քիչ աստված գինա, մե քսան ավուր ճամբախ կէրթան։ Կէրթան մեյմունների էրկիր ու մրջուններուն։ Կտեսին օր էդ էրկուս ասկյար էրած են ու էկած իրարու խետ կռիվ կէնին։

Կասին. «Եթե մրջման կողմ էղինք, պտի մեյմուններ ըսին էնտրցմե վախեցան, թե մեյմուններու կողմ էղինք, պտի մրջուններ ըսին՝ մեյմուններուց վախեցան, կէրթանք բարև կիտանք, որ մեկ լէ ջուտ բարև առավ, ընդրա կողմը կէղինք»։

Մեյմուններ շուտով բարև կառնին, էսոնք կէղին մեյմուններու կողմեն, կասին. «Ախպրտիք, դու մացեք բոաթեք (հանգրստացեք), մենք կռիվ կանենք»։

Ջուանշահն ա կառի ուր վեց ընկեր, կընգի մրջուններու մեջ, յոթն օր ու գիշեր կռիվ կանե, մրջուններ կհաղթա, բաց ուր վեց ընկեր լէ կսպանվին։ Կմնա Ջուանշահ մինակ։ Կիգա բարև մնա կէղի մեյմուններու թագավորից, իղին կառի, գընկնի ուր ճամբախ ու կէրթա։ Շատ ու քիչ աստված գինա, ինչքան կէրթա, կէրթա մի ջրու կհանդիպի։ Գուզի օր զարկա ջուր ընցի, մեկ էն կողմից կբոռա, կասա.

— Ախպեր, էսօր էդ ջրու ընցնելու օր չէ, մնացի, վաղ շաբաթ օր ա, ջուր կցամքի, ընցի։

Կմնա շաբաթ օր, ջուր կցամքի, էդ մարթ զգետ կընցի, ու կիտա ուր ճամբախ ու կէրթա։ Շատ ու քիչ աստված գինա, կէրթա մի թագավորի քաղքին ռաստ կիգա, տեսի օր դալալ էդտեխ կբոռա, կասա.

— Որն օր իդա թագավորին մե սահաթ աշխատի, իրան մե ձի կիտա, ու թագավորութենի կես կիտա։

Կասա.— Ես կիդամ զձին կառնիմ ու կէրթամ։

Կտանին մեկ սարի տակ, ձղիու փոր կպաառին ու տղեն կդընին ինե, ու փոր կկարին, կթողին էդտեխ։ Գել, խավքեր կիգան ու կառին զձիու շանդակ ու գելին սարի գլոխ։ Կպատռին, տղեն դուս կիգա միջեն։ Էդ մարթ ներքին գեհեն կբոռա, կասա.

— Այ տղա, էդտեխ էդ մառմառ քարեր ու անգին քարեր գլորդի գա, քըզի ճամբախ կիտամ շանց, դու կիջիս։

Տղեն ա զմառմառ քարեր ու զանգին քարեր կգըլորա, էդ մարթ զուր բեռներ կբառնա, կասա.

— Դու մեռիս, քըզի ճամբախ շանց չըմիտա, մացի էդտեխ։

Տղեն ա, կշիվարի ու կմնա էդտեխ։ Կիգա ուր չորս բոլոր կիշկա, օր մե մեշից մե բարակ ծուխ գելի. կառե էդ ծուխ ու կէրթա։ Շատ ու քիչ աստված գինա ինչքան կէրթա, կէրթա մե մաղարիմ ռաստ գիգա։ Կտեսի օր ըդտեխ մե խալիվոր նստուկ ա, կասա.

— Բարի օր քե, պապի ջան։

Կասա.— Ասսու խեր ու բարին քե, Ջուանշահ, դու էստե՞խ։

Տղեն կշիվարի ու կկանի՝ «էդ մարթ ի՞նչ գինա իմ անուն Ջուանշահ ա»։

Կասա.— Ջուանշահ, ինչի՞ շվարար դու կանար։ Մը վախենա, որդի, դու ընձի տղա՛, ես քըզի՝ խեր։

Տղեն ա կմնա էդտեխ ժամանակ մի։ Էդ խալիվոր կէրթա կզվոնա։

Օրերուց մեկ էդ տղեն գելի էդ պատուխաններ կիշկա, իրեք

խատ բալնիք կգտի։ Կէրթա էդ հ՚օդի դռներ կբանա։ էդ մեկ դուռ կբանա, կէրթա կբացի մե բախչի մեջ, տեսի էդ բախչի մեջ մի հավուղ մի կա։ Մե քիչ կնստի էդտեխ, իրեք խատ ախչիկ օր խազած խավքու լրբաղ, էկան իջան էդ հավուղի վրա, խանեցին ուրանց խավքու շորեր, ու մտան հավուղի մեջ ու լողկցան։ էն մեկ քուր կվերցու կասա.

— Ըստեխ խողածնի խոտ կիգա, շուտ էրեք ելինք խաքինք մեր խավքու շորեր, չէղնի էդ խողածին իդա մեր խավքու շորեր վերցու ղմեղի տանի։

Պղտիկ քուր կվերցու կասա.— Օր խողածին կա, թրդ իգա, ընձի տանի։

Տղեն ա, շուտ կվազի էդ պղտիկ քրոջ խավքու շորեր կվերցու, կդնե ուր ծոց, կառե ղպղտիկ քուր ու կիդա խալիվորի օթախ։

Խալիվորն ա իրկուն կիգա, կիչկա օր Ջուանշահ առե մեկ ախչիկ ու էկե օթախ, կասա.

— Ջուանշահ, քու գլխուն, արևուն մեռնիմ, էդ ի՞նչ ես էրեր ես։

Կասա.— Էս ախչիկ բռներ եմ, բերեր եմ, տանիմ, ընձիկ էնիմ կնիկ։

Արթրխ խալիվորի մոտ հայտնի ա, էտի վի՞ր ախչիկներն են։

Կասա.— Ջուանշահ, էտի տանիս, կտռնա՞ս պախես։

Կասա.— Ինչի՞ չեմ կրռնա պախե։

Կասա.— Օր կտանիս քու խոր քաղաք, քու տան մեջ մե քառսուն դաղական խոր մի կփորես, էգոր խավքու շորեր կխորես էդ խորու մեջ, ու պողպտե սուն մի կառիս վրեն, մուղաթ կենաս օր էդիկ խոտ չառի ուր շորեր խանա ու խազի, թռի էլի դա էստեխ։

Գելի խալիվորն ա, կքոմա ինչքան օր խավքորենք կա աշխըրքի վրա, կքոմա, կբերա, կխարցու թե.

— Ո՞ր գինա Ջուանշահու խոր քաղաք։

Մեկ լէ պատասխան չի տա, չի գինա։

Կասա.— Էլ խավք մացե՞ր ա։

Կասեն.— Մացե Տեյրի Սիմեռ (Սինամ թռչուն) օր խարիր տարեկան է։

Կէրթան կառին ու կիգան Տեյրի Սիմեռ։

Խալիվոր կասա.— Դու ղՋուանշահի խոր քաղաքը դինա՞ս։

Կասա.— Ես մեկ տարեկան ճիժ ի, մեր էրկիր էղավ խալային (սով), իմ մամ առավ ղընձի ու գնաց էդոնց էրկիր, էն վախտն եմ, տեսեր եմ։

Կասա.— Ուրեմ էդպես ա, դու պտի առիս Ջուանշահ, ուր կընիկ, էրթաս էտոնց էրկիր։

Կասա.— Խալիվորցեր եմ, թախատ (ուժ) չկա։

— Բաց ի՞նչ էնիմ, օր քու խոսք չըմ կանա կոտռե,— կասա,— ընձի բերեք քառսուն դմակ, քառսուն ղիդր լէ գինի. ու թ'ելին ու նստին իմ պառեկին, ղա՛ կէնիմ, թըխ դմակ թալին, ղո՛ւ կէնիմ, դինին թըխ իտան։

Էտմալ էլ կէնին։ Տեյրի Սիմեոն ա կառի Ջուանշահ, ուր կընիկ կբերա ուր խոր քաղաք։

Տեյրի Սիմեոն ա բարի մնաք կէղի Ջուանշահից ու կդառնա։

Ջուանշահն ա, կառի ուր կնիկ ու կէրթա քոշկ ու սարեն։ Կփորա քառսուն գազական մի խոր, ուր կնկա խավքու հագուստներ կբերա, կխորա, ու պողպատե սուն կառի վրեն։ Մե էրկու օր, իրեք օր էդպես մուխատ կկենա։

Օրուց մեկ դելի, կէրթա ավուղուշ Ջուանշահ։ Էդ կնիկն ա, գընկի տան էս կուշտ, էն կուշտ, խոտ առնելով ուր շորերու տեղ գիմնա. զպողպատե սուն կփրցու ու կառի ուր խավքու հագուստներ խորի միջեն, կխաքի ու կկանի փանճարեն։

Ջուանշահն ա իրիկուն նեճրի տեխեն կիգա, կիշկա օր ուր կընիկ խագե ուր խավքու շորեր ու կաղնե փանճարեն։

Կասա.— Ջուանշահ, ես կէրթամ չէ օր քըզիկ ու քու խոր քաղքին անուն կգնամ, էն խատրուն կէրթամ, օր առանց իմ խոր կամքին ընձի բերեր ես, էն հ'ապով ես կէրթամ։ — Ու կթռի, կէրթա։

Ջուանշահն ա կշվարի, կմնա։ Մի ժամանակըմ ա, մեջտեխ կընցնի։ Ջուանշահն էլի գելի էդ ճամբախ կիտա ուր հ'առեջ ու կէրթա։ Շատ ու քիչ աստված գինա ինչքան կէրթա, կէրթա էլի էդ ջրուն ռաստ կիդա, կուղե օր զարկա էդ ջուր ընցնի, էն տեխից մեկ լէ էլի կբոռա, կասա.

— Էսօր ընցնելու վախտ չէ, մացի ջաբաթ օր ընցի։

Կմնա ջաբաթ օր, ասսու խրամանքով էտ գետ կցամքի. Ջուանշահ կընցնի։ Կէրթա շատ ու քիչ էդ քաղքին էլի ռաստ կիդա։ Կտեսի դալալ էլի կբոռա, կասա.

—Որն օր կիգա թագավորի խետ մե սահաթ բանի, ձի մե, ուր թագավորութենի կես կիտա։

Ջուանշահ կասա.— Ես կիգամ։

Կտանի էլ էդ ձորու մեջ, ձիու փոր կպատռա, կթափա ձիու փոր, Ջուանջահ կգնա ինե, ու կկարա ձիու փոր։ Մե քիչ կմնա, խավքեր կիշին ձիու ջանդկի վրա, կառին ղջանդակ, ու գելին սա-

րի գլոխ։ Ջչանդակ կդզդղին իրարուց, Ջուանշահ մեջեն դուս կիդա։ Կտեսի ներքին տեխեն էդ մարթ էլի կբոռա, կասա.

— Ա՜յ տղա՜, էդ մառմառ քարեր ու էդ անդին քարեր գլորտի դա, քրզի ճամբախ ցուց կիտամ։

Կասա.— Քու խեր կանիծեմ, ամեն անգամ սովրեր ես, խաբես զմառմառ քարեր ու անդին քարեր առիս կէրթաս ու ընձի ճամբախ ցուց չի տաս։

Ջուանշահն ա ճամբախ դինա, զխալիվորու քոշկու ճամբախ կիտա ուր հ'առեճ ու կէրթա։ Կէրթա խալիվորու տուն, կասա.

— Բարի օր քըզիկ։

Կասա.— Ասսու բարին ու խեր քըզիկ, Ջուանշահ,— կասա,— դու հ'որի՞ էկար։

Կասա.— Վալահ, իմ կնիկ թռավ էկավ, ես լէ էտրա հ'ապով էկա։

Կէրթա Ջուանշահը էլի էտ բախչի դուռ կբանա, կէրթա կնստի էդ հավուզի վրա, կտեսի օր էդ էրկու քուր էկան էլի, խավքու լըբաղով։

Էն մեկ կվերցու կասա.— Տե՜ս, էն մեր անամոթ քրոջ էրած բաներ, թողե զուր իրիկ, էկե, իրիկ ընկե ետև էկե, իտա տեղ նըստուկ ա։

Քուրվըտիք օր կտեսին զուրանաց փեսեն, շուտ կէրթան խապար կիտան ուրանց խոր, թե վալահ, քու ախչիկ օր թողե էկեր ա, էնդրա իրիկ ընկե ետև էկե, էնտեխ խալիվորու բախչի մեջն ա։

— Տե, — կասա,— գնացեք առեք էկեք։

Կէրթան կառին Ջուանշահ ու կտանին թագավորի մոտ։

Կասա.— Ախչի, իտա մարթ սիրուն մարթմ ա, դու հ'որի՞ թողիր էկար։

Կասա.— Ափո՜, ոնչ մարթուն, ոնչ մարթու տուն անուն չըմ դնի, մինակ քու կամքով չէր, էն հ'ապով էկեր եմ։

Էդտեխ գելի թագավորն ա, բազրկյան կբռնա կդնա ուր ախչկա խետ ու փեսին, կառի կիդա չուր Ջուանշահի խոր խոզի մեջ ու ետ կդառնա։

Ջուանշահն ա, կառնի զուր կնիկ, կիդա ուր խոր քաղաք, կէրթա ուր քոշկ ու սարեն։ Խապար կէրթա թագավորին, թե քու տղեն առեր ա Ջգիր ու Բոթանի թագավորի ախչիկ ու էկեր է։

Թագավորն ա, էդտեխ գելի կքոմա ուր ըռզար քըպարներ, ու կիդա, յոթ օր ու յոթ գիշեր դըհոլ ու գուսան կզարկին ու կուրխընան։ Էնի խասավ ուր մուրազին, դուք լէ խասնիք ձեր մուրազին։

Հ'երկնուց իշավ իրեք խնձոր, մեկ ըսողին, մեկ լսողին, մեկ լէ փայ էնողին։